

## Խնդրում են պահպանության ծառայության պետին վերականգնել իր պաշտոնում

«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ Անվտանգության դեպարտամենտի «Քաջարան» ռեժիմի պահպանության ծառայության աշխատակիցները դիմել են «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Միեր Պոլոսկովին, որով հայտնել են:

«Հարգելի պարոն Պոլոսկով, դիմում ենք Ձեզ, որովհետև այլևս չենք կարող լռել:

Կոմբինատում կատարվում են օրենքից դուրս երեւոյթներ, ինչպես նաեւ ոտնահարվում են մարդու իրավունքները:

06.06.2019թ. մեզ տեղեկացրել են, որ հաստիքի կրճատման պատճառով 05.06.2019թ. աշխատանքից ազատվել է մեր ծառայության պետը՝ Մխիթար Անտոնյանը, ընդ որում՝ նրան այդ մասին տեղեկացրել են մեկ օր ուշ:

Սակայն կրճատելուց առնվազն երկու ամիս առաջ պետք է տեղյակ պահեին նրա մասին՝ ծանուցելով տվյալ անձին, որը չի կատարվել, ինչպես նաեւ ըստ աշխատանքային օրենսգրքի, եթե տվյալ հիմնարկը չի լուծարվում ամբողջությամբ, այլ կատարվում է կառուցվածքային փոփոխություն, ապա պետք է կրճատվող հաստիքի փոխարեն առաջարկվի այլ տարբերակ, եւ միայն առաջարկից հրաժարվելու դեպքում է տվյալ անձն ազատվում աշխատանքից:

Մենք պահանջում ենք վերականգնել մեր ծառայության պետին՝ Մխիթար Անտոնյանին, իր պաշտոնում, քանի որ կրճատումներ կոմբինատում չկան, ընդհակառակը՝ ամեն օր նոր հաստիքներ են ավելանում, այդ թվում՝ ծիծաղելի՝ լուսապատճենահանող, ադիբուդի վաճառող:

Մենք հաստատ համոզված ենք, որ ծառայության պետին աշխատանքից ազատելու պատճառը հաստիքի կրճատումը չէ, այլ ինչ-որ պաշտոնյա անձանց անձնական հակակրանքը. դա միայն օգտագործվել է նրանից ազատվելու համար, քանի որ նա շատ մաքուր, պարտաճանաչ է բարեխիղճ աշխատող է ու շատերին խանգարում է գողություն կատարել եւ ծրիակերությամբ զբաղվել:

Նշում ենք նաեւ, որ տրամաբանական չէ կրճատված հաստիքին նշանակել պաշտոնի ժամանակավոր կատարող, որը 07.06.2019թ. կատարվել է ղեկավարության կողմից:

Ուստի խնդրում ենք մեր պահանջը կատարել եւ ծառայության պետին վերականգնել իր պաշտոնում»:

tesankyun.am

# Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 28 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.  
№ 13 (503)

www.syuniacyerkir.am

## Արծվանիկի պոչամբարում, ի հեճուկս իշխանությունների եւ Քաջարանի կոմբինատի ծախված սեփականատերերի խոսքումների, շարունակվում են ընդլայնման աշխատանքները



## Գորայք համայնքի ղեկավարի նոր քվեարկություն՝ հունիսի 30-ին

Հունիսի 19-ին Վարչական դատարանը անվավեր ճանաչեց հունիսի 8-ին Սյունիքի Գորայք համայնքում տեղի ունեցած արտահերթ ՏԻՄ ընտրությունների արդյունքները:

Նշենք, որ ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած նախնական տվյալների՝ 1408 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 1071 հոգի: Նախնական արդյունքներով համայնքի ղեկավարի ընտրությանը գրանցվել է ձայների բաշխման հետևյալ պատկերը.

ԱՂԱՏԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԲԱԲԻԿԻ՝ 531 քվե,  
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏՅՈՒ ՆԱԻՐԻԻ՝ 515 քվե,  
ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՆՈՒՉՈՐ ՄԻԲԱՅԵԼԻ՝ 13 քվե:

Ընտրությունների արդյունքները դատարանում վիճարկել է Արտյոմ Գրիգորյանը, ով ընդամենը 16 ձայնով է զիջել մյուս թեկնածուին:

Արդյունքների վիճարկումը Վարչական դատարանը քննում է կոլեգիալ կազմով՝ 5 հոգանոց դատավորների խմբով եւ նրանց կողմից ընդունված որոշումը բողոքարկման ենթակա չէ ու հրապարակման պահից մտնում է օրինական ուժի մեջ:

Այժմ Գորայքում նոր ՏԻՄ ընտրություններ պետք է լինեն:

Արտյոմ Գրիգորյանի շահերի պաշտպան

Գեորգ Սկրտչյանը ArmDaily.am-ի հետ զրույցում ասաց. «Հայցի հիմքն այն է, որ կնքված ծրարներ են եղել ու օրենքի պահանջ է եղել, որպեսզի ավելորդ գրառում պարունակող ծրարներն անմիջապես մարվեն, բայց հանձնաժողովի նախագահը միանձնյա որոշել է, որ այդ ծրարները պետք է բացվեն ու դրանցում առկա քվեաթերթիկները հաշվարկվեն, ինչն օրենքի խախտում է: Դա հետագայում պատճառաբանվել է նրանով, որ ծրարում առկա քվեաթերթիկները հավասար են եղել հայցվորի և ընտրված ճանաչված թեկնածուի օգտին:

Հայցվորի կարծիքով՝ նախնական համաձայնություն է եղել ընտրված թեկնածուի ու քաղաքացիների միջև եւ այդ կնքված քվեաթերթիկներով պարզել են, թե արդյոք ընտրել են, թե՛ ոչ»:

Հ.Գ.

Համաձայն Գ. Սյունիքի մարզի 118-րդ հողվածի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարի ընտրությունների անվավեր ճանաչվելու դեպքում քվեարկության օրվանից 21 օր հետո թեկնածուների նույն կազմով անցկացվում է վերաքվեարկություն: Գիմք ընդունելով վերոնշյալը՝ թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովը հունիսի 25-ին կայացած նիստում որոշել է



2019 թվականի հունիսի 30-ին անցկացնել Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի ընտրությունների վերաքվեարկություն:

Ծղուկ, 25 հունիսի 2019թ.

Հավելենք նաեւ, որ վերաքվեարկության դեպքում թեկնածուները չեն կարող ինքնաբացարկ հայտնել, եւ նոր թեկնածուներ չեն կարող գրանցվել: Վերաքվեարկությունից առաջ թեկնածուները կրկնակի քարոզչության հնարավորություն չեն ունենում:

ԿԸԴ-ից թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովին հայտնեցին, որ ընտրական հանձնաժողովները, բացի ծղուկ բնակավայրից, որտեղ տեղի էր ունեցել ծրարների կնիքումն ու այն որպես սահմանված նմուշի համարումն ու հաշվարկը, կարող են անցկացնել նույն կազմով:

# Գործիսում եւ Կապանում ցուցադրվել են սպառազինության եւ զինվորական տեխնիկայի նմուշներ



Հունիսի 23-ին 1-ին զորամիավորման ենթակայությանը գործող զորամասերը Գործիս եւ Կապան քաղաքներում ցուցադրել են սպառազինության եւ զինվորական տեխնիկայի նմուշներ:

Ուսումնական կետերում ներկայացվել են հրաձգային զինատեսակներ, հրթիռահրետանային միջոցներ, թրթուրա-

վոր տեխնիկա: Բացազատված դաշտային խոհանոցներում միջոցառման հյուրերը համտեսել են զինծառայողներին հատկացվող սննդատեսակներ:

## Սյունիքի 4 գյուղի բնակիչներին վառելափայտով ապահովելու գումարները ծախսվել են 33 անտառային կոմիտեի ղեկավարի պաշտոնակատարի համար «Տոյոյա Պրադո» ձեռք բերելու համար



«Հայաստան» ՊՈԱԿ-ին հատկացվել է մինչև 106.192.800 դրամ: Գումարը տրամադրվել է Սյունիքի մարզի 4 գյուղական բնակավայրին մինչև 2300 խմ վառելափայտով ապահովելու նպատակով տրակտորի, սղոցարանի, վառելափայտ ճղելու սարքավորման, փայտածուխի արտադրամասի, չորանոցի, «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ», «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ ՊԻԿ-ԱՊ» եւ «ՈՒԱԶ ՀԱՆՏԵՌ» ավտոմեքենաների ձեռքբերման եւ դրանք անմիջապես Կապանի անտառտնտեսության մասնաճյուղին հանձնելու համար:

Վել է մինչև 106.192.800 դրամ: Գումարը տրամադրվել է Սյունիքի մարզի 4 գյուղական բնակավայրին մինչև 2300 խմ վառելափայտով ապահովելու նպատակով տրակտորի, սղոցարանի, վառելափայտ ճղելու սարքավորման, փայտածուխի արտադրամասի, չորանոցի, «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ», «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ ՊԻԿ-ԱՊ» եւ «ՈՒԱԶ ՀԱՆՏԵՌ» ավտոմեքենաների ձեռքբերման եւ դրանք անմիջապես Կապանի անտառտնտեսության մասնաճյուղին հանձնելու համար:

Պարզվել է, սակայն, որ ՊՈԱԿ-ի առաջարկով վերոհիշյալ պայմանագիրն անհիմն փոփոխվել է, եւ տրակտորի, փայտածուխի արտադրամասի եւ «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ» ավտոմեքենայի փոխարեն 2018թ. սեպտեմբերի 27-ին կնքված պայմանագրով 25.700.000 ՀՀ դրամով ձեռք է բերվել «ՏՈՅՈՍԱ ԷԼ ՍԻ Պրադո 4,0լ Բիզնես + /6 ՋԻ/» ավտոմեքենա, որը երկու ամիս անց 5 տարի ժամկետով հանձնվել է ՀՀ անտառային կոմիտեի ղեկավարի պաշտոնակատարի անհատույց օգտագործմանը:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը պետական շահերի հայց հարուցելու իրավասության շրջանակներում լայնածավալ ուսումնասիրություններ է նախաձեռնել «Հայաստան» ՊՈԱԿ-ում, որի առաջին փուլում ուսումնասիրության առարկա է դարձվել ՊՈԱԿ-ի հիմնական միջոցների շարժի, նյութական ձեռքբերումների ոլորտը: Այս մասին հայտնում են ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնից:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության արդյունքում ձեռք են բերվել «Հայաստան» ՊՈԱԿ-ի պաշտոնատար անձանց կողմից առերեսույթ պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական անփութության հանցագործությունների հատկանիշներ պարունակող առերեսույթ տվյալներ եւ անհրաժեշտ է հանգամանքների լիարժեք պարզման նպատակով իրականացնել լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի նախաքննություն հիշյալ դեպքի առթիվ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի կողմից հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 315-րդ հոդվածի 1-ին մասերի հատկանիշներով:

Նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

tert.am

## Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է Հայաստանի ՄԳ շուրջ իրադարձություններին

Վենետիկի հանձնաժողովը հունիսի 21-22-ին անցկացրել է հերթական միստը, որի ժամանակ տեղեկացվել է Հայաստանում սահմանադրական գործընթացների, ինչպես նաև Սահմանադրական դատարանի անդամների վերաբերյալ հնչող հայտարարությունների մասին: Սա ասվում է հանձնաժողովի միստի արձանագրության մեջ:



գործընթացներին, որպեսզի անհրաժեշտության դեպքում հրապարակային հայտարարություն արվի այս կապակցությամբ»,- ասվում է արձանագրության մեջ: Հանձնաժողովը նաև լիազորվել է անհապաղ կազմել Հայաստանի Դատական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ կարծիք, որպեսզի այն հայտատուներին ուղարկվի մինչև հոկտեմբերի լիազումար նստաշրջանի մեկնարկը: [www.shantnews.am](http://www.shantnews.am)

## Տեղ համայնքում անասնաբուժական կետ բացվեց

Սյունիքի մարզի Տեղ համայնքում հունիսի 7-ին բացվեց նորակառույց անասնաբուժական կետ: Բացման արարողությանը ներկա էին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. Սթեֆանո Լազզարոտտոն, Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը, գործարարներ, բնակիչներ: Անասնաբուժարանը կառուցվել է կահավորվել է Շվեյցարիայի

գարգացման եւ համագործակցության գործակալության ու Տեղի համայնքապետարանի համատեղ ջանքերով: Իր բացման խոսքում դեսպանը կարեւորեց այս համագործակցությունը, իսկ Սյունիքի մարզպետը ողջունեց բոլորին եւ նախաձեռնություններին աջակցելու պատրաստակամություն հայտնեց: Օրակարգով նախատեսված միջոցառումների հաջորդ կանգառը

Կոռնիծոր գյուղն էր, որտեղ բացվեց «ԷԼՈՒԱ» ընկերության կաթի ընդունման կետը: Այն եւս կառուցվել է երկկողմ համագործակցության արդյունքում: Ներկաները ծանոթացան կաթի մթերման գործընթացին, քննարկվեցին կաթի ընդունման պայմանները:

Սյունիքի մարզպետարան / Syunik Regional Administration

## Մեղրիի զորամասի միջադեպի գործով մեղադրյալների թիվը հասել է 21-ի

Մեղրիի զորամասերից մեկում մարտի 17-ին արձանագրված միջադեպի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում մեղադրանք է առաջադրվել 21 անձի, այդ թվում 19 պարտադիր ժամկետային զինծառայողի եւ 2 սպայի (մեկը՝ զորամասի հրամանատար, մեկը՝ գումարտակի հրամանատար): Այս մասին NEWS.am-ի գրավոր հարցմանն ի պատասխան հայտնեցին գլխավոր դատախազությունից: Նշենք, որ զորամասի հրամանատարի պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցվել է: Քրեական գործի շրջանակներում հարցաքննվել է շուրջ 56 անձ, այդ թվում՝ որպես մեղադրյալ ներգրավվածները: Հիշեցնենք, որ մարտի 17-ին Մեղրիի զորամասերից մեկում զինծառայողներն ինքնակամ լքել են զորամասը՝ այդպիսով հայտնելով իրենց բողոքը: Դրանից հետո մի խումբ զինծառայողներ տեղափոխել են Կապանի, ապա՝ Ստեփանակերտի կարգապահական զորամասեր, որտեղից էլ այնուհետեւ տարել են առաջնագիծ: Գնդի սպաների խոսքով՝ մասսայական այս ակցիան կազմակերպելու մեջ կասկածվող զինծառայողները պարբերաբար աչքի են ընկել ոչ կանոնադրային պահվածքով: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ ԶՕ-ի 364-րդ հոդվածի 2-րդ մասի (Ձիմվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը), եւ ՀՀ ԶՕ-ի՝ 375-րդ հոդվածի 1-ին մասի (Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) հատկանիշներով: Գործը քննվում է Գործի կայագրի զինվորական դատախազությունում:

# Համագործակցության նոր հուշագիր

Կապան համայնքի և բնակավայրի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկության՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի միջև համագործակցությունը տասնամյակների պատմություն ունի: Հունիսի 6-ին այն թարմացվեց նոր համաձայնագրով: Կապանի համայնքապետարանում Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը և «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության (նախկին Կապան լեռնահարստացման կոմբինատ) գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը սոցիալ-տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր

ստորագրեցին, որով ընկերությունը համաձայնագրի շրջանակում ֆինանսավորում է Կապանի Լեռնագործերի 16 հասցեում կառուցվող նախադպրոցական ուսումնական հաստատության շինարարական աշխատանքները: Ընդ որում՝ 2019 թ. ընթացքում կհատկացվի 70 մլն դրամ, իսկ 2020 թվականին՝ 30 մլն դրամ:

Համաձայնագրի ստորագրմանը մասնակցում էին «Չաարատ Գոլդ Ինթերնեշնլ Լիմիթիդ» ընկերության արտադրության գծով տնօրեն Դարին Կուպերը և ընկերության ֆինանսական գծով տնօրեն Քրիս Էգե-

րը: Համաձայնագրի ստորագրումից հետո անմիջական մթնոլորտում հանդիպմանը մասնակցող Կապանի համայնքապետարանի և «Չաարատ Կապան» ընկերության աշխատակիցները համայնքի ղեկավարի և ընկերության տնօրենի գլխավորությամբ քննարկեցին երկուստեք հետաքրքրությունները կայացնող խնդիրներ, նախաձեռնեցին հետագա անելիքները և համագործակցության հեռանկարները:

Վահրամ Օրբեյան



## ...Ժամանակն է, որ հանքարդյունաբերության ոլորտը լինի պեպրակային հովանու ներքո, այն է՝ ազգայնացնել...



զոնականում հանգրվանելը, ինչը ոչ այլ ինչ է, եթե ոչ խաբարե պետության առաջ ստանձնած պարտավորությանը:

Հանքարդյունաբերության մասին խոսելիս պետք է անպայման հաշվի առնել Հայաստանի աշխարհագրական տարածքի սահմանափակությունն ու առանձնահատկությունները: Միայն Սյունիքում այսօր գործում են 11 մետաղական հանքավայրեր և շահագործման են սպասում եւս 28 մետաղական հանքավայրեր: Գործող հանքավայրերի շահագործման արդյունքում Սյունիքում արդեն կա 12 մեծ ու փոքր պղնձաքար: Հայաստանի մեծ փոքր երկրում մեծ ծավալներով հանքարդյունաբերությունն ուղղակի անթույլատրելի է: Ըստ իս՝ մեր երկրում կարելի է շահագործել ընդամենը մի քանի մետաղական հանքավայր՝ այն էլ միմիայն բնապահպանական խիստ վերահսկողության ու շահույթի արդարացի բաշխման պայմաններում: Իսկ դրանից ստացվող միջոցները պետք է ուղղել գիտության, կրթության, բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, թեթև արդյունաբերության, զբոսաշրջության և այլ ոլորտներ: Բայց ինչպե՞ս, երբ դրան հասնելու ճանապարհները բառիս բուն իմաստով խավարված են պատված:

Էկոլոգիայի մասին խոսելիս իսկ պեղծոր է, քանի որ տնտեսավարող տնտեսական համայնքները, բայց որքանով են արդարացիված մեծ՝ են կասեի առեղի չափերով դրանց արդյունահանումը, երբ այդ նույն օգտակար կոչվող հանածոն վնասակար է դառնում բնակչության համար... Մի կողմից բաց եղանակով առեղի ծավալների հասնող հանքաքարի արդյունահանում, մյուս կողմից պղնձաքարներում թունավոր նյութի ամբարումը թույլ է տալիս ասելու, որ նշածս պղնձաքարներն իրենց տեխնիկական խիստ կասկածելի և մտահոգիչ նկարագրերով դանդաղ գործողության ակն են հիշեցնում, որի վրա մասնաձև է մեր ողջ բնակչությունը: Ի՞նչ ասել է պղնձաքար՝ դա թույլով լցված դազաղ է, որին առջակատել ենք մենք և օր օրի դրանց լեզվակներն ավելի շատ գեղատեսիլ տարածքներ են կլանում՝ դառնալով սպառնալիք թե՛ առողջության, թե՛ անվտանգության և թե՛ խոցելիության առումով (ռեկուլտիվացիա գոյություն չունի): Կարծում եմ՝ հանքարդյունաբերությունը տնտեսության մեջ չի կարող լինել գերակա ճյուղ, դա նույնն է, որ փորձենք 1 լիտրանոց անոթի մեջ տեղավորել 2 լիտր ջուր... Հայաստանն այս առումով շատ փոքր է և օդային ավազան արտանետված առեղի չափերով թունավոր նյութերի առանց այն էլ տարածաշրջանի մթնոլորտի հարաբերական խոնավության բարձր ցուցանիշի պատճառով (Իջեանից հետո Կապանը 2-րդն է), ինչը բնորոշվում է տեսական ամպամածության աստիճանով, ամպերին միանալով (փոշին) առաջացնում է «խտացման միջուկ» և բնական ճանապարհով (քամիներ) ի վիճակի չեն հեռանալու, քանզի մեզ մոտ գերիշխում են ստորին լեռնահովտային քամիները... Մնում է ենթադրել, թե ու՞ր է հորդալու սենյակ

ամպերից վարարած մահաբեր գետը: Կրկնում են, չափերի, նաեւ լեռնագրության պատճառով, էլ չեն ասում, որ ծանր նյութերը միանգամից աղտոտում են կենսոլորտի՝ առանց բացառության բոլոր շերտերը...

Ժամանակակից գիտատեխնիկական նվաճումները ոլորտին վերաբերում են միմիայն հանքաքարի արագ արդյունահանման առումով, իսկ ռեկուլտիվացիան կամ լրիվ ցիկլի արտադրության ստեղծումը տասնամյակներ շարունակ մնացել են հավերժական չեզոքության գրոյական կետում: Հանքահումքային արդյունաբերությունը հարմար և ձեռնտու է միմիայն օտարերկրացի սեփականատերերին, սակայն, ով գիտե, թե ո՞վ է իրական սեփականատերը: Կիսաֆաբրիկատի տեսքով մեր խտանյութը դեռեւս մետաղ չդարձած նվիրում ենք համաշխարհային շուկային արդյունքում գծագրում կենսաբանական զենք հանդիպացող պղնձաքարների աշխարհագրությունը՝ հաշվի չառնելով «Քամիների վարդ» հասկացողությունը: Չմոռանաք, որ մեր տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքն ունի նաեւ բեկվածքներ, ասել է թե՛ խաբարվել է նաեւ տեխտոնիկան, իսկ սեյսմոակտիվ գոտի հանդիպացող Հայաստանը մեծ շռայլություններ է գալիս իրավունքը չունի, քանզի բնության տարերքի ժամանակ այն կրթի անկանխատեսելի հետեւանքներ: Անթրոպոլոգները կարծափեն, եթե համալիր ուսումնասիրություններ սկսեին կատարել խնդրո առարկա հարցի հետ կապված:

Պետությունը երկար ու ձիգ տարիներ չի կարողացել զսպել (չի ցանկացել) տնտեսավարողին, իսկ վերջինս հագուրդ տալով սեփական գերաշահույթ ստանալու մոլուցքին, ոլորտը դարձրել է մահաբեր սրվակ, ինչը կաթիլային (մեղմ է ասված) ներարկման եղանակով ուղղակիորեն թափանցում է մարդու օրգանիզմ, որը հղի է այն հետեւանքներով, որոնք արդեն իսկ ակնհայտ են... Տխուր վիճակագրական թվերը փաստում են, որ Հայաստանը քաղցկեղածին հիվանդությունների առումով մոլորակի 172 երկրների մեջ զբաղեցնում է 2-րդ հորիզոնականը, իսկ Հայաստանում այդ նույն տեղը զբաղեցնում է Կապանը, որը պետք է լուրջ մտորումների տեղիք տա: Ես ունեմ բազմաթիվ տվյալներ օդային աղտոտվածության վերաբերյալ, ինչն անչափ պետք է մտահոգիչ լինի, ուղղակի հրապարակելն անիմաստ եմ գտնում: Լինելով տնտեսական աշխարհագրագետ, անհարիր եմ համարում հետայսու լեռնահանքային արդյունաբերության մեջ արդյունահանման ծավալների հարաճուն տեմպերի ստրատեգիան, այն միմիայն կուժեղացնի կենսոլորտի ամենակարեւոր բաղադրիչ հանդիսացող մարդ արարածի (մարդու) գոյության կռիվը:

Ի հեճուկս ոլորտի տնտեսավարողների՝ այն չի կարող լինել հեռանկարային, քանզի ժամանակակից տեխնոլոգիաներով վերագինելու ցանկություններ, էկոլոգիական հիմնահարցերի լուծումները ընկերները բնավ չունեն...

Բարձրաձայնելով հանքարդյունաբերության առաջ բերած խնդիրների մասին՝ բնապահպաններն ու շահագործող հարկատուներն անընդհատ դեմ են առել պատի, որովհետեւ խնդիրների մասին խոսվում է, խոստումները

մնում են լոկ թղթի վրա, սակայն լուծումներ այդպես էլ չեն գտնվում, ուստի ժամանակն է, որ հանքարդյունաբերության ոլորտը լինի պետական հովանու ներքո՝ այն է ազգայնացնել ու դնել վերջակետ:

Մի հավելում եւս, որը, թվում է, քիչ կապ ունի այս ոլորտի հետ: Առաջիկայում ենթադրվում է վառելիքի, պարարտանյութերի, դեղորայքի, շինանյութի, փայտանյութի (ցանկը կարելի է շարունակել) շուկաներում գների վերանայում՝ իջեցման ուղղությամբ, կարելի է սպասել: Խոշոր ներկրողների շուկաները, բնականաբար, ուսումնասիրվելու են, և նոր իշխանությունը չի կարող քայլեր չափել: Ի՞նչ պետք է անի բիզնեսը: Պետք է կուտակած կապիտալն այլ ոլորտներում տեղաբաշխի, գնա դիվերսիֆիկացման, լինի ճկուն ու շուկայում դիմադրող՝ երկարաժամկետ մնալու համար: Պարզ է, որ եթե ունենան ներկրման մի քանի բիզնես իր գերաշահույթով ու դա մեկզի, ապա շատ արագ կլինի սնանկացում: Հետեւաբար՝ միակ էլքը դիվերսիֆիկացիան է, և տնտեսության ճյուղային կառուցվածքին անդրադառնալը դառնում է հրամայական: Կոնկրետ Սյունիքի օրինակով կարող եմ պնդել, որ հանքարդյունաբերությունից կախված լինելը, անթրոպոգեն (մարդու տնտեսական սխալ գործունեության) և բնածին առկա շատ գործունեություններով պայմանավորված լինելն ինքնին ավելի ռիսկային են դարձնում ոլորտը և, Աստված մի արասցե, եթե վերը նշվածով պայմանավորված կաթվածահար լինի ոլորտը, մենք կկանգնենք սխուր իրողության առաջ: Դիֆերսիֆիկացումն արդիական են ամվտագ կղարձնի մեր տնտեսական գործունեությունը:

Հարց է առաջանում, ինչե՞ս համոզվել, որ հանքաքարի մեջ բացի մոլիբդենից և մեզ հայտնի այլ քիմիական տարրերից էլ ի՞նչ է առկա կամ ինչպե՞ս համոզվել միավոր հունքի մեջ տոկոսային հարաբերությամբ այս կամ այն քիմիական տարրի պարունակության հարցում: Միամտության չեն համարի, եթե ասեն, որ այդ թվերը խիստ կասկածելի են, առանձին դեպքերում նաեւ հակասական գոնե ինձ համար: Մենք պետք է ունենանք սեփական լաբորատորիաներ, որոնք պետք է հագեցած լինեն ժամանակակից տեխնոլոգիաներով, որոնց եզրակացությունների շնորհիվ կարգվենք, թե խտանյութի տեսքով արտասահմանցիներին մեր հարստությունը տալը հանցավոր քայլ է, այլ բան է, որ ներկայումս այդ ճանապարհով մեզին (նկատի ունեմ նաեւ ներկայիս կառավարությանը) ծածուկ թաքցվում են շահույթի իրական թվերն ու փաստերը:

Ավելի քան համոզված եմ, որ նոր կառավարությունն որդեգրելու է այս տնտեսական քաղաքականությունը և մինչ ոլորտի հիմնախնդիրներին ամբողջական լուծում տալը, գոնե այս փուլում կանի ամեն ինչ, որ երկրի գանձարան մուտքագրվեն հայտնի և անհայտ հասցեներում հանգրվանած ստվերային գումարները:

Թեման շատ ընդգրկում է և շարունակելի...

Արսեն Գրիգորյան,  
տնտեսական աշխարհագրագետ

# 13 հունիսի 2019թ., Գորիսում նշվեց ԱԿսել Բակունցի 120-ամյակը (պատմում են լուսանկարները)



Լուսանկարները՝ Սոնա Արզումանյանի

# Բակունցյան ընթերցումներ. հանրապետական գիտաժողով Գորիսի պետական համալսարանում

Հունիսի 13-ին լրացավ հայ արձակի մեծանուն վարպետ Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակը: Գրական հոբբեյանի առթիվ հունիսի 14-ին Գորիսի պետական համալսարանում «Սյունիքի հոգեւոր և նյութական ժառանգությունը» գիտական ծրագրի շրջանակներում կազմակերպվեց հանրապետական գիտաժողով, որին մասնակցում էին գիտության հինգ դոկտոր, մեկ տասնյակից ավելի գիտության թեկնածուներ, հետազոտողներ 33 ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից, պատմության ինստիտուտից, հնագիտության և ազգագրության ինստիտուտից, Երեւանի պետական համալսարանից, Վանաձորի պետական համալսարանից, Հայաստանի ազգագրության թանգարանից, Կրթության ազգային ինստիտուտից, Արցախից, ինչպես նաեւ Գորիսի պետական համալսարանից:

Գիտաժողովին ներկա էին նաեւ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսուցիչներ, ուսանողներ:

Բացման խոսք ասաց Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Դուկասյանը: Ողջունելով հյուրերին ու գիտաժողովի մասնակիցներին գրական տոնի առթիվ՝ նա նշեց, որ գիտաժողովի նպատակն Ակսել Բակունցի ստեղծագործության նորոպի արժեւորումն է, այնպիսի հարթակի ստեղծումը, որը հնարավորություն կտա քննարկելու գիտատեսական նոր հարցադրումներ՝ կապված մեծանուն արձակագրի գրական ժառանգության ուսումնասիրության հետ: Նա կարեւորեց գեկուցումների թեմատիկ բազմազանությունը, ոչ միայն գրականագետների, այլեւ պատմագետների, բանագետների ու ազգագրագետների մասնակցությունը գիտաժողովին՝ Բակունցի ստեղծագործության հարուստ շերտերը բացահայտելու և գիտական նորություններ բացահայտելու նպատակադրումով:

Ձեկուցումները հատկանշելի էին գրողի ստեղծագործության նոր հատկանիշների բացահայտումով, խորքային, հետաքրքիր դիտարկումներով: Ձեկուցողները փորձեցին նորոպի բացահայտել Բակունցի ստեղծագործական ու անձնային կողմերը, արժեւորել նրա ուրույն կենսագրությունը, արձակի գեղարվեստականության չափանիշները, լեզվի ու ոճի զարգացման ընթացքը, կենսական երեւոյթների խորքային ընդգրկման, ավանդակների ու նորարարականի բարձրարվեստ համաձուլման գրական ու գրականագիտական ծիրը:

Ձեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը (Ակսել Բակունցը 1930-ական թթ. գրապայքարի բովում), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանո Եղիազարյանը (Ռոստոմ Թումանյանի կերպարը Ակսել Բակունցի ստեղծագործության մեջ), բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Թամար Հայրապետյանը (Ակսել Բակունցի ստեղծագործության ժողովրդագիտական և մշակութաբանական հենքը), բանասիրական գիտությունների դոկտոր Հայկանուշ Մեսրոպյանը (Հայերենի բարբառները Բակունցի ստեղծագործություններում), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգ Ստեփանյանը (Ակսել Բակունցը Գորիսի ծխական դպրոցի աշակերտ), Արցախի պետական արխիվի վարիչ Լեւոնիկ Հակոբյանը (Գաղթականի կերպարը Բակունցի ստեղծագործության մեջ), ազգագրագետ Սվետլանա Պողոսյանը (Հայկական տարածքի ու զարդարանքի արտացոլանքն Ակսել Բակունցի երկերում), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Գայանե Ղազարյանը (Ակսել Բակունցի դերը հայ-ադր-



բեջանական սահմանների ճշտման խնդրում (1920-ական թվականներ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Նարինե Շամսյանը («Յար խուշտա» պարի վկայություններն Ակսել Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքում), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սիրանուշ Առաքելյանը (Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպի շուրջ), բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությանը (Ակսել Բակունցը և Ն.Գոզլի «Տարաս Բուլբան»), բանասիրական գիտությունների թեկնածու Սվետլանա Մանուչարյանը (Դարձվածային միավորներն Ա.Բակունցի «Կարմրաքար» վեպում), պատմական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետյանը («Ակսել Բակունցն անխարդախ ժողովրդայնության առաջամարտիկ խորհրդահայ գրականության մեջ» աշխատությունը), Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Հասմիկ Գրիգորյանը (Ա.Բակունցի «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքի բառապատկերային շերտերը), հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Նազելի Հախվերդյանը (Ա.Բակունցի «Մթնածորի չարքը» պատմվածքի հոգեբանական վերլուծություն), ԳՊՀ ՄՀ ամբիոնի դասախոսներ Նելլի Բաղդասարյանն ու Հերմինե Ալավերդյանը (Գեղագիտական դաստիարակության դրսևորումներն Ա.Բակունցի ստեղծագործություններում), Կարինե Միրաքյանը (Ա.Բակունցի ստեղծագործությունների մանկավարժական-դաստիարակչական նշանակությունը): Գիտաժողովին հեռակա մասնակցություն էին բերել բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Ավանեսյանը (Տեսիլն Ակսել Բակունցի պատմվածքներում), բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Հովհաննիսյանը (Գունային խորհրդանիշները Տերյանի և Բակունցի ստեղծագործություններում), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Համո Սուքիասյանը (Պրոֆեսոր Վաղիմիր Ղազախեցյանի ներդրումը բակունցագիտության բնագավառում) և ուրիշներ:

Գիտաժողովն ընթացավ լիազուրկ երկու նիստով, որոնք մախազահում էին համալսարանի պատվավոր հյուրերը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Դավիթ Գասպարյանն ու Վանո Եղիազարյանը: Գիտաժողովի փակմանը ԳՊՀ ռեկտոր Ա.Ղուկասյանի շնորհակալական խոսքից հետո նիստերի մախազահողները ներկայացրին իրենց տպավորությունները՝ բարձր գնահատելով գեկուցումների գիտականությունը, արդիականությունը, գիտաժողովի կազմակերպչական մակարդակը:

Ելույթ ունեցավ նաեւ ԳՊՀ գիտական



բարտուղար, գիտաժողովի կազմակերպիչ Թեհմինա Մարությանը՝ նախնական մանրամասներ ներկայացնելով Ակսել Բակունցի հոբբեյանական միջոցառումների շրջանակում Սյունիքի ու Արցախի ավագ դպրոցներում ԳՊՀ-ԱԵԳՄՄ շրջանակներում հայտարարված շարադրության մրցույթի արդյունքների մասին: Այդ առթիվ Գորիսի պետական համալսարանում կկազմակերպվի մրցանակաբաշխու-

թյուն, որին կիրավիրվեն բոլոր մասնակիցները:

Ակսել Բակունցի 120-ամյակին նվիրված գիտաժողովը Բակունցի ստեղծագործության գնահատությունը եւս մեկ էջով լրացնելու փորձ էր, որը կլինի շարունակական:

Նոննա Միրզոյան



# Մարզիկը, մանկավարժը, պատերազմի վեպերանը

Առողջ մարմնում՝ առողջ հոգի... Այս ճշմարտությունն է իր կյանքում միշտ դավանել ֆիզիկական դաստիարակության գործի նվիրյալ Արշակ Վեգիլյանը: Յոթնամյա կրթություն ստանալուց հետո դարձել է աշակերտ էր, բայց նրա տարերքը սպորտն էր. ջլապիճու ու ամրակազմ պատանին պարբերաբար մասնակցում էր շրջանային մրցումներին, հաղթող ու մրցանակակիր դառնում տարբեր մարզածեերից: Առաջին մարզական հաջողության բերկրանքը ճաշակել է հեռավոր 1928 թվականին:

1930-ական թվականներին Ղափանում երիտասարդությանը մեծ սպորտի մասնակից դարձնելու հնարավորություններ տակավին չէին ստեղծվել, բայց Արշակի մեջ ձգտումը երբեք չմարեց, զնաց իր նախընտրած ուղիով: 1939-ին գերազանցությամբ ավարտելով երեւանի ֆիզկուլտ տեխնիկումը, մշտնակալվել է շրջանի ֆիզկուլտ կոմիտեի նախագահ: Նրա մարզական հաջողությունների մասին տեղյակ լինելու համար բնավ պետք չէ այստեղ-այնտեղ ընկնել, մարդկանց հարց ու փորձ անել: Ընտանեկան ալբոմում խնամքով պահպանված են համամիութենական եւ հանրապետական լրագրերում նրա մարզական նվաճումների մասին պատմող հոդվածներ, թղթակցություններ, լուրեր՝ «Советский спорт», «Комсомолец», «Հայաստանի ֆիզկուլտուրիկ», «Սովետական դպրոց», «Պիոներ կանչ» եւ հանրապետական ու շրջանային այլ թերթեր: Իսկ «Симферопольская газета» թերթում տպագրված են բարձրագատկորդ Վեգիլյանի մասին չափածո տողեր.

*Прыгуну Везирияну  
Толчок и взлет... послушно тело...  
Гордятся им и те, и те,  
Прыгун, не любит он предела  
И как физорг на высоте.*

Չափանը նրան մեծարում է փառաբանող մականունով Ամի, որ հորինվել է ստույգ եղելությունից. միակ եղբայրը՝ Ժորան, զոհվել է Մեծ հայրենականում: Լսելով եղբոր զոհվելու բոթը, լացուկոծ է դրել, վշտահար ասել. «**Էլ ինձ Ամի ասող չի լինելու**»: Ի պատիվ նրա նկատմամբ տածած մեծ սիրո՝ կապանցիները նրան մկրտել են Ամի հորջորջունով, այսինքն՝ բոլորի հորեղբայր:

Մեծ հայրենականի ժամանակների մի լուսանկարում պատկերված է գրասեղանի մոտ նստած, որի մոտ մեծ հերթ է գոյացել. պատերազմ մեկնողների անձնական տվյալներն է գրառում: Հետո եկավ նաեւ իր՝ ռազմաճակատ մեկնելու ժամանակը: 1942-1945 թթ. մասնակցել է երկրորդ աշխարհամարտին՝ մարտնչել երրորդ բելառուսական, Առաջին ուկրաինական ռազմաճակատներում, երկու անգամ վիրավորվել, Կովկասյան նախալեռներից մարտերով հասել մինչեւ Պրահա ու Գրեզեն, շարքային զինվորից հասել ավագ լեյտենանտի կոչման: Լավ կռվելու արգասիքը Կարմիր աստղի երկու շքանշանն են ու բազմաթիվ մեդալները: Գործող բանակում գտնվելով՝ երեք տարում շատ-շատ բան է տեսել. մի անգամ ուղարկվել են «լեզու» բերելու, մի գերմանացի է գերեվարել, երբ շտաբում հարցաքննել են, պարզվել է՝ ճանաչված ֆուտբոլիստ է, ով խաղացել է նաեւ Գերմանիայի ֆուտբոլի հավաքականի կազմում...

Միշտ էլ անբաժան է եղել մեծ սպորտից: Ընտանեկան ալբոմում պահվող արդեն խու-

նացած մի թերթից տեղեկանում ենք, որ զվարդիայի լեյտենանտ Արշակ Վեգիլյանը 1945 թվականի սեպտեմբերի 10-ին Վիեննայում մասնակցել է ռազմաճակատային սպորտակազմի 100 մետր արագավազքում դարձել հաղթող, բարձրագատկում գրավել երկրորդ, իսկ հեռացատկում՝ երրորդ տեղերը: Մի այլ մրցման ժամանակ թեթեւ աթլետիկայի մի քանի ձեւերից առաջնությանն շահելու համար 1946 թվականին Խորհրդային Միության մարշալ Իվան Կոնեւը զվարդիայի լեյտենանտ Արշակ Վեգիլյանին պարգևատրել է անվանական ժամացույցով:

Ջորացրվելուց հետո աշխատել է Կապանի թիվ 3 (ռուսական) դպրոցում, լեռնամետալուրգիական տեխնիկումում, վաստակած հանգստի անցնելուց հետո՝ Եղվարդի միջնակարգ դպրոցում: Ողջ եռանդով նվիրվել է պատանիների եւ աղջիկների մարմնակրթության գործին: Դպրոցում դասավանդելու տարիներին հեռակա կարգով ավարտել է Երեւանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: Հետո Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1965 թվականին նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում: Եղվարդի միջնակարգ դպրոցում նրա ստեղծած մարզահրապարակն արժանացել է Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի բրոնզե մեդալի: Դասավան-



դելով գյուղական կրթօջախում, երկու տարվա ընթացքում չորս առաջին կարգային մարզիկ է պատրաստել, ինչի համար մեծ պատվի է արժանացել:

Հինգ զավակ է ունեցել Ամին. երկու որդի՝ Մասիս եւ Ալիկ, երեք դուստր՝ Դոնարա, Մագդա, Դարին: Ավագ որդին՝ Մասիսը, զնացել է հոր ունահետքերով, դեռ ավելին՝ միասին ֆիզկուլտուրա են դասավանդել Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում:

Վեգիլյանն օժտված էր հանգավոր խոսք ստեղծելու շնորհով, հուճկով: Խոսքաշեն մարդ էր, սեղանի անզուգական թամադա:

Նրա խոսքը համեմված էր ժողովրդական բան ու բանով, հետաքրքրական պատմություններով: Որտեղ լինում էր, իրադարձությունների կենտրոնում էր հայտնվում, շրջապատվում մեծով ու փոքրով:


Պաշտամունքի էր հասնում նրա սերը հայրենի բնաշխարհի, Խուստուփ սարի հանդեպ: Բանաստեղծական պատկերներով էր նկարագրում վեհապան խուստուփը:

*Քո կրծքից բխող ջրերն անուշ,  
Թփերդ՝ դալար, վարդերդ՝ բնքուշ,  
Հովն էլ ահա քո գնդուխտ լանջից  
Մամռոտ անտառի շունչն է բերում ինձ:*

Իր չափածո խոսքով հաճախ էր անդրադառնում Մեծ հայրենականի իրադարձություններին: Բանաստեղծություն է նվիրել իր աշակերտ եւ մարտական ընկեր, տանկիստ Միշա Գաբրիելյանի հիշատակին: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 40-ամյակին նվիրված բանաստեղծության մեջ, որ վերնագրված է «Հաղթանակ», այսպիսի տողեր կան. «Մենք ամեն քայլի նայել ենք ուղիղ մահվան աչքերին», իսկ մարտերում զոհված ընկերների պատճառով վիշտն այսպես է ձեւակերպել.

*Իսկ ցավերը մեր քարեր են դարձել,  
Քարացել են լուռ, դարձել հուշարձան:*

Հիշում են՝ ինչպես էր ոգեւորվել, երբ հայրենի գյուղում Մեծ հայրենականում զոհված վաչագանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը տեղի ունեցավ (1969



Դիմանկարը՝ Սարգիս Մանգասարյանի

րը նվիրել նրան: 1919 թ. օգոստոսին՝ Նժդեհի Կապան մտնելուց հետո վերսկսվել են ազգամիջյան ընդհարումները: Ծնողներն իրենց որդիներին վատախոսությամբ էին Նավասարդին հանձնում՝ կռիվ տանելու: Ասում են՝ Նժդեհը 1921 թ. հուլիսին Վաչագան-Խուստուփ-Մեղրի երթուղով անցնելով Պարսկաստան, առաջարկել է Նավասարդին՝ ընկերակցել իրեն, սակայն Նավասարդը հրաժարվել է՝ ասելով, որ չի կարող անտեր թողնել իր չորս երեխային: 1930-ականներին երկու անգամ բռնադատվել է, 1937-ին սպանվել երեւանի բանտում: Հայտնի չէ, թե որտեղ է գտնվում շիրիմը: Հոր անունը տալիս միշտ Արշակի աչքերը լցվում էին, կսկիծով կրկնում էր՝ **հայրս չորս տախտակի էլ չարժանացավ...**

Նավասարդ Վեգիլյանի «Մոսին» հրացանն ու մարտական դաշույնը պահ է տրված Սարդարապատի հուշահամալիրի թանգարանում, ներկայացվում է «Մայիսյան հերոսամարտերը եւ Հայաստանի Հանրապետության հռչակումը» ցուցադրության մեջ: Այդ մասին Վեգիլյաններին տեղեկացնում է թանգարանի տնօրինությունը:

Կյանքի վերջին տարիներին, երբ հարցնում էին վիճակը, Ամին լուրջ պատասխանում էր, հետո վերջում կատակի տալիս. «Էհ, ապրուստ չմնաց, ինձ հետ ծնվածը, ինձ հետ մեծացածը, օր ու գիշեր արածը վաղուց մահացել է, միայն ես եմ ողջ մնացել...»:

Մանկավարժ Չոնիկ Օրբելյանն իր հեղինակած Վաչագան գյուղի պատմությանն ու գերդաստաններին նվիրված «Մերոնք» գրքում Արշակ Վեգիլյանին այսպես է բնութագրում. «Նորին գերազանցություն քանդակագործ մայր Բնությունը նրա դիմագծերը կերտելիս «մուրճի ծանր հարվածներ է հասցրել...» ղեմքը մեծ էր խորշոմներով, խորխորատներով պատած քարակուփ ժայռի, աչքերը՝ արծվի, քիթը՝ կորնթարդ: Նրա առնական խառնվածքում ամփոփված էին Սյունյաց երկրի մարդկանց տոկոսությունը, ռազմական ոգին, մարզական կամքը: Ամին Վաչագան գյուղի մարդկային գործվածքի վառվուն, չխամրող նախն է»:

Վահրամ Օրբելյան

Սփռեց դեպի բարձունքներ ձգվող բակուցյան գեղեցիկ, լուսահորդ ու հաստատակալ արահետներ: Եվ մենք տեսանք, թե ինչպես է Ալեսեյ Բակուցը, հողը համբուրելով, լեռան ստորոտի բառաբանային բուրաստանները, արեւակառ խայտանքները, կարկտահար պտուղները, կայծակնահար ծառերը, անձրեանծծ լայնախոռոչ քարերի ժայռներն իր հոգու խորքում նրբին մատուցելու դարձնելով, երկնի հունը իր կապույտ պեքերում ծրարելով, խղճի հեզ երգը մորթող ձորերը լույսով պատելով՝ աշխարհից դանդաղ գնում դեպի լեռնազագագաթ՝ իր հետ բարձրացնելով գյուղի հեզ դեմքը, ուր ակոսվել էին մխրճված սեպերի խորը վերքերն ու նրանց սպիները: Նա գնում է դեպի ակափական վեհություն, դեպի ամպածրար երջանկություն, աստվածածն միայնություն... Որտեղից միայն կարելի մայել ու հասկանալ երկնքում ճախրողի անսահմանությունն ու գետնի վրա ցատկոտողի սահմանափակությունը, զրնգուն գույների ավելորդությունն ու ճանճի վե-

րածված գորշության միապաղաղությունը, ծաղկահրդեհ մարգագետնի խայտանագանքն ու ծիլախեղդ բողբոջների որբությունը, մայրամուտի շառագունեղ խրախճանքն ու այս լուսե դարում սովորված կյանքի անարեւ տամուկ, հայացքը...

Բակուցը բարձրանում է լեռնազագագաթ եւ այնտեղից շինողով հեղեղվում դեպի խուլ կիրճերը. այսպես տարիների կենսափորձում կոփված հայացքն է արվեստաբեմ բարձրանալուց առաջ օժնվում հոգու ավագանուն... Այդպես խնորվում են հույզապարունները, երբ քառասրբից համբառնում է ստեղծագործությունը: Այս հեղեղը գորշության ծալք-քղանցքներում գտավ դրդի անհատում փշուրներ: Նա ներծծվեց մայրյան բորբ երակներում՝ դառնալով մի գորեղ, զուլալ պատում բնության եւ բնությունը թարգմանող արվեստի միջուկ: Այդ հեղեղը զուբանաբեղի արահետներում կարկատեց գոյի շունչն ու տրոփյունը, քնատ ակոսի բացխուփ աչքերից որսաց խլրտունի կայծկլտուն ցուլքերը, բնության սիրո կատարյալ գեղեցկությամբ նա փորձեց

բուժել աղամագոյի հուսատ կացությունը եւ հավիտենության լույսի ստվերով դարձանել սրտմաշուկ ցավի լուրջությունը: Նա սեւ ցելերում մեր հորովելի սերմերը ցանեց, այնտեղ շաղ տվեց ժիր մանգաղների երգող խիճը եւ իր էության պայծառ լույսը հաստատեց այնտեղ:

«Երանի՛ այն ազգին, որ Բակուցն ունի: Երանի՛ մեզ, որ կարող ենք վայելել բակուցյան բառաշխարհի, բնաշխարհի, խոհաշխարհի հմայքը եւ ապրել այդ սքանչելի աշխարհում...» միջոցառումն ավարտվեց դպրոցի տնօրեն Հովհիկ Ալեքսանյանի հուզիչ խոսքով:

Լիանա Սահակյան  
Սիսիանի N5 հիմնական դպրոցի մայրենիի եւ գրականության ուսուցչուհի

# Ուխտի պարարագ եւ փոնական օր Վահանավանքում



Հունիսի 22-ին Հայ առաքելական սուրբ եկեղեցին տոնում է մեր հավատքի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից:

301թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ հոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որը սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Տոնական այդ օրը նշվեց նաեւ Վահանավանք վանական համալիրի ուխտի օրը: Այդ առիթով վանքում մատուցվեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Հայկազ քահանա Մատոյանի, Մեղրիի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանի, Քաջարանի հոգեւոր հովիվ Տեր Շիրակ քահանա Խանոյանի եւ Վահանավանք վանական համալիրի հոգեւոր հովիվ Տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանի ձեռամբ:

Պատարագից հետո եկեղեցու բակում կազմակերպվեց մատաղի հյուրասիրություն եւ տոնական միջոցառում՝ պարային խմբերի մասնակցությամբ: Եկեղեցին լեցուն էր բազմաթիվ հավատացյալներով եւ Հայաստանի տարբեր համայնքներից իրենց հոգեւոր հովիվներով ժամանած ուխտավորներով:

Ս. Պատարագին մասնակցում էր նաեւ համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը:

**Կապանի համայնքապետարան/Kapan municipality**



# Երիտասարդ, բայց եւ հմուտ բժիշկ Վիգեն Ղուլունցը...

Վերջերս կնոջս՝ Հայկուհի Ղեւոնդյանի մոտ առողջական լուրջ խնդիրներ էին առաջացել:

Դիմեցինք «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Մանկաբարձ-գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ Վիգեն Ղուլունցին:

Պարզվեց՝ գործ ունենք բազմա-հանգույց միոմայի հետ:

Ընտանյոք հանդերձ անհանգըստության մեջ էինք:

Ապրիլի 30-ին կատարվեց վիրահատություն, որն անցավ բարձր մակարդակով:

Հիմա կնոջս ինքնազգացողությունը լավ է, արդեն իսկ վերադարձել է բնականոն կյանքին, իսկ տագնապալից օրերը մնացել են անցյալում: Եվ այդ ամենը՝ շնորհիվ երիտասարդ բժիշկ Վիգեն Ղուլունցի, ում անկեղծ երախտագիտությունս եմ հայտնում:

Հետադարձ հայացք ձգելով լարված ու տագնապալից այդ օրերին, ես նաեւ անանձնական ուրախություն եմ այսօր ապրում, որ Գորիսում, բժշկական կարգերի երկարատեւ փոխատեղումներից հետո, ունենք այնպիսի պրոֆեսիոնալ եւ հմուտ բժիշկ, ինչպիսին Վիգեն Ղուլունցն է:

Ընդամենը 1986 թ. ծնված երի-



տասարդը, ով երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանն ավարտել է վեց տարի առաջ, հասցրել է շատերի կյանքը փրկել, բազմաթիվ մարդկանց էլ վերադարձնել լիարժեք կյանքով ապրելու կորսված հնարավորությունը:

Եվ ուրեմն՝ ոչ միայն հպարտություն ապրենք երիտասարդ այդ բժիշկի գործունեությամբ, այլեւ հոգատարությամբ շրջապատենք նրան, նպաստենք, որ եւ ինքը, եւ իր ման երիտասարդ մասնագետներն ամրապնդվեն Գորիսում ու իրենց ամոքիչ, փրկարար ծառայությունը մատուցեն տարածաշրջանի բնակչությանը:

**Սիշա Պողոսյան  
գ. Հարժիխ**

## Ծանուցում

**Հաստատված է «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ Խորհրդի 29.05.19թ. նիստում, խորհրդի նախագահ Հ. Ալեքսանյան**

«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերը իրավիճակում են մասնակցելու «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին, որը տեղի կունենա ընկերության վարչական շենքում (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) 2019թ. հուլիսի 3-ին ժամը 16.00-ին:

Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու վերջին ժամկետը՝ 01.07.2019թ. ժամը 11.00-ն է:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

- 1. Ընկերության գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը:
- 2. Ընկերության գործունեության հաշվետվությունների, հաշվեկշռի,

շահույթների եւ վնասների հաշվի հաստատում:

3. Շահույթների եւ վնասների բաշխման հաստատում:

4. Խորհրդի ընտրություն:

5. Շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունում:

6. Աուդիտորի ընտրություն:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում, օրակարգային հարցերի վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու եւ ստանալու համար բաժնետերերը կարող են դիմել ընկերության խորհրդին (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) հունիսի 24-ից մինչեւ հուլիսի 1-ը, աշխատանքային օրերին ժամը 11.00-ից մինչեւ 15.00-ն:

## Շնորհակալություն

Բուժաշխատողի մասնագիտական տոնի առթիվ ցանկանում եմ երախտիքի խոսքեր հղել Կապանի բժշկական կենտրոնի իմ սիրելի բժշկուհի, ինձնողիվիզ մասնագետ Ռիտա Սկրտչյանին, ավագ բուժքույր Սիրանուշ Գեւորգյանին, բուժքույրեր Նարինա Պողոսյանին, Լուսինե Ոսկանյանին եւ մայրապետին, ովքեր հավատարիմ մնալով իրենց առաքելությանը, մեծ նվիրումով պայքարում են մեր կյանքի ու առողջության համար:

Հարգելի՛ բժշկուհի

Ձեզ եւ ձեր աշխատակիցներին մաղթում եմ ամուր առողջություն, երջանկություն՝ համոզված լինելով, որ միշտ հավատարիմ կմնաք Հիպոկրատի երդմանը:

**Հասմիկ Հունանյան**

**Արցախի Հանրապետություն Քաղաքապետի շրջան, գյուղ Երիզվանք**

## Վաճառվում է

Երեք սեյականոց բնակարան, որը գտնվում է Կապանի Մելիք-Ստեփանյան 20 հասցեում:

Տեղեկությունների համար կարող եմ զանգահարել 094 43 85 40 հեռախոսահամարով:

# «Մշակութային արահետը»՝ գյուղական բնակավայրերում



«Մշակութային նախաձեռնություններ» հասարակական կազմակերպությունը «Մշակութային արահետ» ծրագիրն է իրականացնում: Հունիսի 17-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ «Մշակութային արահետ» ծրագրի առաջին փուլի ամփոփման արարողությունը: «Մշակութային նախաձեռնություններ» հասարակական կազմակերպության ղեկավար Թերեզա Գալստյանը նախ պատվոգրեր հանձնեց այն կազմակերպություններին, Կապանի համայնքապետ՝ Գեւորգ Փարսյան, Կապանի արվեստի պետական ջուլջեի «Ղերասանական արվեստ» մասնագիտության սովորողներին (դասախոս՝ Արամ Հայրապետյան) եւ այլն, ովքեր նպաստել են ծրագրի իրականացմանը: Իսկ ծրագիրը միտված էր գյուղական բնակավայրերում մշակութային կյանքի աշխուժացմանը, նաեւ նպատակ ուներ մեկնելու կուրս ժամ մարդկանց կտրել առօրյա հոգսերից,

հաղորդակից դարձնել մշակույթին:

Միջոցառման սկզբում ցուցադրվեց տեսաֆիլմ մշակութային կանգառներից մեկի մասին, այնուհետեւ բեմահարթակը տրամադրվեց ստեղծագործական խմբի անդամներին: Մասնավորապես, Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերական խմբի անդամները հանդես եկան ասմունքով, երգ ու պարով՝ հանելի պահեր պարգեւելով հանդիսականին:

**Վահրամ Օրբելյան**

# Սյունյաց Երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**  
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 45 90 47:  
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am  
Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):  
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:  
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»  
իրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՅՈՒՄ»  
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ



Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:  
Տպագրանակ՝ 1200, գինը՝ 100 դրամ:  
Ստորագրված է տպագրության  
28.06.2019թ.: